

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դոկտորանտ

ՀԱՅԱՍՏԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Հոդվածում քննության է առնվում Հայաստանի Հանրապետությունում միգրանտների վերաինտեգրման հետ կապված համալիր հարցերն ու խնդիրները: Մասնավորապես, հոդվածի շրջանակներում անդրադարձ է կատարվում միգրանտների վերաինտեգրում եզրույթի հատակեցման ու սահմանման հարցերին, ինչպես նաև միգրանտների վերաինտեգրման համալիր մշակութային խնդիրներին:

Հիմնաբառեր- միգրանտների ինտեգրում, միգրանտների վերաինտեգրում, միգրանտների ադապտացիա, մշակութային շոկ, մուլտիկուլտուրալիզմ, գաղափարախոսություն, լեզվաբաղաբանություն:

Միգրացիոն խոշորածավալ հոսքերը այնպիսի փոքր պետությունների համար, ինչպիսին Հայաստանն է, կարող են հանգեցնել ոչ միայն երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացմանը, այլև հարուցել ժողովրդագրական խոշորամասշտաբ փոփոխությունների և պետական կառավարման ու հանրային կյանքի կանոնակարգման սկզբունքների հիմնովին վերանայման:

Փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր պետության համար բազմաթիվ դժվար հաղթահարելի խնդիրներ են առաջացնում ոչ միայն երկրից բնակչության մի մասի արտահոսքը, այլև այնպիսի երևույթներ, ինչպիսիք են արտերկրներից բնակչության և աշխատանքի մեկնածների վերադարձը հայրենիք:

Այդ իրողությունը նախևառաջ վերադարձի ուղի բռնած անհատի կենսակերպի և հոգեբանության փոփոխության հիմնավոր վերազնահատման անհրաժեշտությունն է: Կիսում ենք այն տեսակետը, որ «վերադարձած միգրանտների համար միգրացիան, իսկ հետո նաև վերադարձը, առաջին հերթին, ժամանակային մի սահման է, ջրբաժան, որը տարանջատում է նրանց կյանքի տարբեր հատվածները»¹:

Հայաստան վերադարձածների քանակը սակավ է եղել վերջին տասնամյակում՝ ուստի նրանց վերաինտեգրումը խնդրահարույց չի եղել ՀՀ իշխանությունների և հասարակության համար: Մինչդեռ վերջին երկու երեք տարիներին հայրենիք վերադարձած ՀՀ քաղաքացիների քանակը զգալիորեն աճել է:

Հետաքրքիր է պարզել հայերի Հայաստան վերադարձի դրդապատճառները՝ մի քանի նկատառումներով:

Նկատելի է, որ աշխարհի բոլոր ազգությունների համար տունդարձի շարժառիթները համանման են: Հետևաբար, արժե հղում կատարել միգրանտ-

ների հայրենիք վերադարձի խնդիրն ուսումնասիրող հետազոտողների կարծիքին: Այսպես, Ֆ.Կերասեն հիմնավորում է վերադարձի պատճառահետևանքային չորս դրսևորում.

1. Զախողակների վերադարձ, որը վերաբերում է իր միգրացիոն նպատակի իրագործման հարցում խոչընդոտների հանդիպած և անհաջողության պատճառով ստիպված իր ծագման երկիր վերադարձած միգրանտներին,

2. պահպանողականների վերադարձ. այն վերաբերվում է նրանց, ովքեր, հաստատվելով և որոշ ժամանակ բնակվելով այլ երկրում, բայց չկարողանալով հաղթահարել նոր միջավայրում հաստատվելու դժվարություններն ու մարտահրավերները, վերադարձի որոշում են կայացրել,

3. նորարարների վերադարձը. վերաբերվում է այն միգրանտներին, ովքեր, յուրացնելով նոր բնակչության վայրի արժեքներն ու պրակտիկան, ինչ-ինչ պատճառներով վերադարձի որոշում են կայացրել և վերադառնալով՝ իրենց հետ նոր արժեքներ ու գաղափարներ են բերել,

4. թոշակառուների վերադարձ, որն ընդգրկում է այն միգրանտներին, ովքեր աշխատունակության տարիներին բնակվելով այլ երկրում, տարիքն առնելուց հետո վերադարձել են հայրենիք²:

Ուսումնասիրելով վերադարձի շարժառիթները գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ-ի քաղաքացիների հայրենիք վերադարձի դրդապատճառները տարաբնույթ են. ընդունող երկրում հայ միգրանտների խոցելի իրավիճակում հայտնվելը, ընտանիքի հետ վերամիավորվելու ձգտումը, մտերիմների հետ անձնական շփումների և համակեցության ցանկությունը, ընդունող երկրում աննպաստ բնակլիմայական պայմանների հետևանքով առողջական խնդիրների առաջացումը:

Նկատելի է նաև, որ հայ միգրանտների որոշակի մասն ընդունող երկրում ենթարկվում է վարչա-

www.journal.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան պատժի՝ անգամ տվյալ պետությունից արտաքսման:

Այժմ փորձենք բացահայտել գիտապրակտիկ առումով «միգրանտների ինտեգրում» և «միգրանտների վերաինտեգրում» եզրույթների առանձնահատկությունները: «Միգրանտների ինտեգրում» (որը վերաբերվում է արտաքին միգրանտներին) ասելով հասկանում ենք ընդունող սոցիումի և միգրանտների մշակույթների հանդիպակած շարժման գործընթաց, մշակութային նորմերի և արժեքների միաձուլում, որոնք սկզբնական շրջանում գործում են անջատ և հնարավոր է նաև՝ միմյանց հակասելով³:

Այսինքն, տվյալ պարագայում մենք գործ ունենք միջէթնիկ մշակութային, շփումների և ադապտացիայի (հարմարվողականության) հետ: Ամերիկացի գիտնական՝ փիլիսոփայության դոկտոր, հաղորդակցության (կոմունիկացիայի) պրոֆեսոր Կ. Դոդն առանձնացնում է ադապտացիայի պայմաններում միջէթնիկ համագործակցության հիմնական չորս մոդելներ.

- Flight - սեփական միկրո աշխարհի ստեղծում՝ այլ մշակույթի հետ ուղիղ շփումներից խուսափելու փորձեր,

- Fight - էթնոկենտրոնության ակտիվ դրսևորում՝ սեփական վարքագծի մոդելը նոր միջավայր փոխանցելու ցանկություն,

- Filter - մշակութային երկխոսություն կամ բազմաբևեռ ռազմավարություն՝ սեփական մշակույթի պահպանում, սեփական էթնիկ խմբի հետ նույնականացում, բարձր շփվողականության մակարդակ նոր միջավայրում և այլն,

- Flex - մշակութային նույնականացման փոփոխություն՝ ինչպես արտաքին պահվածքում, այնպես էլ՝ սոցիալական ընկալման մակարդակում⁴:

Ներկայումս, գիտապրակտիկ գրականությունում բացակայում է «միգրանտների վերաինտեգրում» եզրույթի հստակեցված բացահայտումը: Ուստի, կփորձենք ստորև ներկայացնել «միգրանտների վերաինտեգրում» եզրույթի մեր բնորոշումը, այն է՝ «միգրանտների վերաինտեգրում» ասելով հասկանում ենք սոցիումից տևական ժամանակով ֆիզիկապես անջատված և ներկայումս այլ սոցիումի մշակութային տարրեր կրող կամ երբևէ այդ սոցիումում ֆիզիկապես չգտնված (օրինակ՝ ազգությամբ այն հայերը, ովքեր ծնվել և ապրում են Հայաստանի սահմաններից դուրս) բայց ընդհանրական մշակութային տարրեր կրող անձանց ֆիզիկական միացումը սոցիումին, որոնք միևնույն ժամանակ ադապտացվում են իրենց էթնիկ կամ այլ առանձնահատկությունով՝ պայմանավորված սոցիումային մշակույթի ներկայիս իրավիճակին և, լինելով երկսոցիում մշակույթի կրող՝

ակամայից ազդեցություն են ունենում (դրական և բացասական) իրենց հիմնական սոցիումային պատկանելիության մշակույթի վրա:

Այսպիսով, վերոնշյալ միջէթնիկ համագործակցության չորս մոդելների առկայությունը պետք է հաշվի առնել նաև Հայաստանի Հանրապետության կողմից միգրանտների վերաինտեգրման քաղաքականության մշակման գործում:

Վերոգրյալից ելնելով՝ կարող ենք փաստել, որ միգրանտների ինտեգրումն ու վերաինտեգրումը մշակութային շոկ են առաջացնում նրանց համար, քանի որ մշակութային շոկը դա այն կոնֆլիկտն է, որն ընթանում է մարդուն ընկալելի (սովոր) նորմերի և արժեքների՝ որոնք բնորոշ էին այն միջավայրին, որը նա լքել է, և այն նորմերի և արժեքների միջև, որոնք բնորոշ են իր նոր միջավայրին⁵:

Վերջին տարիների աշխարհաքաղաքական իրողություններն իրենց բացասական ներգործությունը ունեցան Մերձավոր Արևելքի հայության ճակատագրում: Փախստականի իրավիճակում հայտնված սիրիահայերի համար Հայաստանը ընկալվում է որպես հայրենի երկիր, որն անհրաժեշտության դեպքում համարվում է որպես միգրացիայի հնարավոր վերջնական նպատակակետ: Նկատելի է նաև, որ սիրիահայերի մի մասը Հայաստանը դիտում է որպես խաղաղ և ապահով հանգրվան՝ բարեկեցիկ երկրներ մեկնելու ճանապարհին:

Միգրանտների վերաինտեգրման գործընթացի վրա ուղղակի ազդեցություն կարող է գործել նաև իրենց մշակութային պատկանելիության սոցիումի (պետության) տվյալ ժամանակաշրջանի ազգային գաղափարախոսությունը, (կամ գաղափարախոսությունները): Իսկ ի՞նչ է ազգային գաղափարախոսությունը - դա գաղափարների համակարգ է, որի ամենաբնորոշ ու կարևոր հատկանիշը սերտ առնչությունն է հասարակության հոգեբանության հետ: Այսինքն՝ տվյալ հասարակության գաղափարախոսությունը խարսխված է նրա աշխարհընկալմանն ու բարոյական չափանիշներին: Այլապես, գաղափարախոսությունը կտրվում է իր բովանդակությունից և չի ընդգրկում հասարակության գիտակցության շերտերը: Հայաստանի Հանրապետությունը մոնոտարր (ազգային) պետություն լինելով հանդերձ՝ բնականաբար պետք է իր ազգային գաղափարախոսությունները կառուցեր իր ազգային ինքնության նույնականացման շուրջ: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ամենալայն ընկալում ստացած ազգային գաղափարախոսությունը դա «Մեկ ազգ մեկ մշակույթ» գաղափարն է, որը նպատակ է հետապնդում սփյուռքում հայապահպանությանը զարկ տալու և սփյուռքահայերին իրենց հայրենիքի հետ ամուր կապը պահելու համար:

Վերահստեղծող միգրանտների մոտ հայոց լեզվի անադարտության և ուսուցման (անհրաժեշտության դեպքում վերաուսուցման) հարցը կարևոր է Հայաստանի նման մոնոտարր պետության համար, քանի որ մի կողմից պետությունը լուծում է իր միասնական էթնիկ մշակույթի պահպանման հարցերը, իսկ մյուս կողմից իրականացնում է վերահստեղծող միգրանտների ադապտացիան լեզվաքաղաքականության միջոցով: Ի դեպ, Հայաստանի լեզվաքաղաքականությունն ազգային անվտանգության քաղաքականության մի մասն է կազմում: Իսկ լեզվաքաղաքականությունը պետությունն ստեղծած ազգի մշակութային գերակա արժեքի՝ լեզվի լիակատար, անվտանգ կենսագործունեությունն ապահովող օրենսդրության, գործնական միջոցառումների համակարգն է:

Հայաստանի ազգային պետություն լինելու հանգամանքով պայմանավորված՝ միգրանտների ադապտացիան պետք է իրագործվի հայ ինքնության ճանաչման, ընդունման և դրա տարածման հենքի հիման վրա՝ միևնույն ժամանակ չանտեսելով միգրանտների մշակութային ինքնությունը: Հակառակ պարագայում Հայաստանի նման մոնոտարր պետության համար անխուսափելի է մուլտիկուլտուրալիզմի⁸ քայքայիչ ազդեցությունը, որի մասին արդեն բարձրաձայնվում է եվրոպական երկրների կողմից, քանի որ այդ երկրներում վերջին տարիներին միգրացիոն հոսքերի անկառավարելիության արդյունքում խիստ բևեռացվում են այդ երկրների հասարակությունները՝ սոցիալ-մշակութային առումներով:

Վերջին տարիներին սերտացել են Հայաստանի կապերը Սփյուռքի հետ: Դրա դրսևորումներից մեկն է այն, որ ՀՀ կառավարության որոշմամբ ազգությամբ հայերի համար միգրացիոն ընթացակարգերն ազատականացված են:

Հայաստանի Հանրապետությունում, անկախ ազգությունից և դավանանքից, մարդու ազատ տեղաշարժը և հայրենիք վերադարձի իրավունքը դիտվում է որպես մարդու հիմնարար իրավունքների անբաժանելի մասը: Այն ամրագրված է մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում: Այդ սկզբունքով է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որի 40-րդ հոդվածի 3-րդ մասով վավերացվում է. «Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունք»:

Այս դրույթը բխում է ՀՀ Սահմանադրության 54-րդ հոդվածից, ուր ընդգծվում է՝ «Քաղաքական հետապնդման ենթարկվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունում քաղաքական

ապաստան հայցելու իրավունք»:

ՀՀ-ում գործող օրենքով որոշակի արտոնություններ է սահմանվում Հայաստանում բնակվելու և Հայաստանի քաղաքացիությունն ձեռքբերելու պատրաստակամություն հանդես բերող սփյուռքահայերի համար: Այսպես ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածում ամրագրված է. «Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունն ձեռք են բերում օրենքով սահմանված պարզեցված կարգով»:

Հարկ է ընդգծել, որ նույն սկզբունքներով է առաջնորդվում Իսրայել պետությունը: Արտերկրներից Իսրայել վերադարձող ազգությամբ հրեա անձանց անհապաղ շնորհվում է պետության քաղաքացիություն:

Դժվար է անտեսել այն փաստը, որ հայազգի միգրանտների մի հատված արտերկրներում բնակություն են հաստատել և աշխատանքային գործունեություն ծավալել՝ խախտելով ընդունող երկրի գործող օրենսդրությունը: Այդ իրողությունը դժվար հաղթահարելի խոչընդոտներ է ստեղծում ոչ միայն մուտքի, այլև միգրացիայի ծագման երկրի համար:

Արտասահմանյան մի շարք երկրներում, հատկապես ՌԴ-ում, անօրինական կարգավիճակում են հայտնվել հայ միգրանտների մեծաքանակ հոսքերը: Նրանք որոշակի դժվարություններ են ստեղծում ընդունող երկրի իշխանությունների և հասարակության համար: Միաժամանակ, արտաքսման վտանգի առջև կանգնած այդ զգալի քանակության միգրանտների հետընդունումը Հայաստանում կարող են սոցիալական որոշակի լարվածություն առաջացնել երկրում:

Վիճահարույց է ՀՀ ՏԿԱ միգրացիոն պետական ծառայության ղեկավարի մամուլում արտահայտած այն տեսակետը, թե եվրոպական երկրներում միգրացիոն ճգնաժամը բացասական հետևանքներ չի ունենա հայ միգրանտների համար և նրանց չեն արտաքսի Հայաստան: Մինչդեռ տեսանելի է, որ եվրոպական տարբեր երկրներից, թեկուզև սակավ քանակությամբ, վտարվում են անկանոն ճանապարհով այնտեղ հայտնված Հայաստանի քաղաքացիները:

Նկատելի է, որ երկրից վտարված հայ միգրանտների հոսքը առավել մեծաքանակ է ՌԴ-ից:

Հայաստանի իշխանություններն որոշակի ջանքեր են գործադրում միգրանտների վերադարձի հետ առնչվող խնդիրները կարգավորելու համար: Հասկանալի է, որ հայ միգրանտների հետ առնչվող խնդիրները կարելի է լուծել միայն ընդունող երկրի իշխանությունների հետ համագործակցված:

Միգրացիոն ոլորտում ստեղծված բացասական իրավիճակը մեղմելու նպատակով՝ ՀՀ-ի իշ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

խանությունները հետընդունման համաձայնագրեր կնքեցին եվրոպական մի շարք այլ պետությունների և միջազգային կառույցների հետ: Այսպես, 2013 թվականի ապրիլ և նոյեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետությունը կնքել և ապա վավերացրել է «Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին» համաձայնագիրը: Մինչ այդ Հայաստանի Հանրապետությունն եվրոպական 12 պետությունների և Ռուսաստանի Դաշնության հետ կնքել է հետընդունման համաձայնագրեր:

2003-2011 թվականներին Հայաստանի Հանրապետության և եվրոպական միության 12 պետությունների միջև կնքված հետընդունման համաձայնագրերով կարգավորվում են անկանոն միգրացիայի վերաբերյալ միջպետական հարաբերությունները: ՀՀ-ն համաձայնագրերը կնքեց 12 այն պետությունների հետ, որոնցում առավել չափով նկատելի է հայ միգրանտների հոսքը:

Ռուսաստանի Դաշնության հետ ՀՀ-ի 2011 թվականին կնքված հետընդունման համաձայնագրով սահմանվում է, որ վերադարձվում են այն անձինք, ովքեր չեն կատարում հայցող կողմի պետության տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու համար գործող պայմանները: Նախապայման է հանդիսանում այն, որ ապացուցվում է կամ տրամադրված առերևույթ ապացույցների հիման վրա կարելի է իրավաչափորեն ենթադրել, որ նրանք Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են:

Հայաստանի Հանրապետությունը միգրանտների հետ առնչվող խնդիրների կարգավորման օրենսդրական դաշտի զարգացման ընթացքում առաջնորդվում է երկու սկզբունքով.

ա) ՀՀ-ն որոշում է միգրացիոն ոլորտի կարգավորման գերակա ուղղությունները և հստակեցնում իր կողմից լուծվելիք խնդիրների առաջնահերթությունը,

բ) ՀՀ միգրացիոն օրենսդրությունը համապատասխանեցվում է միգրացիայի կարգավորման միջազգային կոնվենցիաների հիմնարար դրույթներին: Այդ իմաստով Հայաստանը միջազգային համաձայնագրերի կնքմամբ ստանձնում է միգրացիայի ոլորտի կարգավորման որոշակի պարտավորություններ:

Հայրենիք վերադարձած անձանց և նրանց վերախնամեցման նպատակով միջազգային կառույցների կողմից տրամադրվող աջակցությունը զգալի դեր է խաղում միգրացիայի ոլորտի կանոնակարգման ասպարեզում: Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) հետևողական աշխատանք է կատարել միգրացիոն բառարանի ստեղծ-

ման ասպարեզում: Նրանում հստակեցված է «միգրացիայի կառավարում» տերմինաբանությունը, որը մինչ այդ հետազոտողների կողմից տարատեսակ բնութագրություն է ստացել: Միգրացիայի կառավարումն ընդգրկում է ազգային կառույցների համակարգում առկա պետական բազմաթիվ գործառույթներ: Այն ընդգրկում է տվյալ երկրի սահմաններում օտարերկրացիների մուտքի և ներկայության կառավարումը, փախստականների և աջակցության կարիք ունեցող այլ անձանց պաշտպանությունը:

Հայաստանի Հանրապետությունում միգրացիան կարգավորվում է ՀՀ կառավարության թիվ 51 արձանագրային որոշմամբ, 2010 թվականի դեկտեմբերի 30-ի միգրացիոն պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգով:

Առաջնորդվելով միգրացիայի գործընթացի կարգավորման ՀՀ կառավարության վերը նշված և մի շարք այլ որոշումներով՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը մշակեց «Հայաստանի Հանրապետության միգրացիայի 2017-2021թթ. քաղաքականության ռազմավարությունը»: Նշված ռազմավարությունում զգալի տեղ է հատկացվում հայրենիք վերադարձած միգրանտների վերախնամեցման խնդիրներին: Գլխավոր ուղղվածությունը հայրենիք վերադարձածներին համակողմանի նյութական և բարոյահոգեբանական օժանդակություն ցուցաբերելն է:

2009-2015թթ. ընթացքում Հայաստան վերադարձած շուրջ 1200 քաղաքացիների Հայաստանի կառավարության և միջազգային կառույցների աջակցությամբ ցուցաբերվել է ֆինանսական և սոցիալական բնույթի աջակցություն:

Սակայն հայրենիք վերադարձածների վերախնամեցման հարցում առկա են որոշակի բացթողումներ: Այդ ծրագրերի իրականացման ֆինանսավորումը հաճախ ընդհատվում է, որի պատճառով հայրենիք վերադարձածները չեն ստանում սպասվող նյութական աջակցությունը:

Այդ ամենը հետևանք է նրան, որ հայրենիք վերադարձածների վերախնամեցման աշխատանքները չունեն համակարգված բնույթ: Բացակայում է այս ոլորտում աշխատանքներ իրականացնող կառույցների միջև համագործակցությունը, հստակեցված չէ տարվող միջոցառումների առաջնահերթությունը: Այս բացթողումները բացասական են ազդում հայրենիք վերադարձած անձանց վերախնամեցման աշխատանքների նպատակային իրականացմանը:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության մշակված Հայաստանի Հանրապետու-

թյան միգրացիայի քաղաքականության 2017-2021թթ. ռազմավարությունը ձեռքագատված է վերանշված բացթողումներից: Ռ-ազմավարությունում հստակեցվում է Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման նպատակները և դրանց իրականացման գերակա ուղղիները: Դրանք են.

ա) Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման քաղաքականության հայեցակարգի մշակում,

բ) Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների հիմնախնդիրների հետ առնչվող պետական մարմինների կարողությունների զարգացում,

գ) Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման աջակցություն ցուցաբերող պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության խորացում, մշտական գործող ֆորումի ստեղծում,

դ) վերադարձի ցանկություն ունեցողների, ինչպես նաև վերադարձածների շրջանում տեղեկատվածության մակարդակի բարձրացում՝ վերադարձող անձանց հիմնախնդիրների լուծման ուղղությամբ առկա ծրագրերի ու մեխանիզմների վերաբերյալ,

ե) երկկողմ և բազմակողմ համագործակցության շրջանակներում Հայաստան վերադարձած ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման աջակցության ծրագրերի շարունակության ապահովում¹¹:

Հայաստան վերադարձած անձանց վերաինտեգրման խնդիրը դարձել է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մտահոգության առարկան: Հայաստան վերադարձածների վերաինտեգրմանը հետևողականորեն աջակցում է նաև ՄՄԿ-ի հայաստանյան առաքելությունը: Ջգալի տեղ է հատկացվում միգրանտների համար տեղեկատվական բնույթի նյութերի պատրաստմանը, տպագրությանը և միգրանտների շրջանում մասսայականացմանը:

2016 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՄՄԿ-ի համատեղ ջանքերով մշակվեց և տպագրվեց Հայաստան վերադարձած անձանց վերաինտեգրման ծավալուն ուղեցույցը: Ուղեցույցում ընդգծվում է, որ հայրենիք վերադարձած անձանց վերաինտեգրումն առաջնահերթային է ոլորտի հիմնահարցերը կանոնակարգելու համար: Ուղեցույցում ուշադրության են արժանացել հայրենիք մշտական բնակության նպատակով ՀՀ վերադարձած քաղաքացիների կենսագործունեության առանցքային խնդիրները՝ տնտեսական և սոցիալական վերաինտեգրում, աշխատանքի, կենսաթոշակի, կրթության, առողջապահության և այլ հիմնախնդիրների կարգավորումը:

Ուղեցույցի նպատակն է աջակցել կանոնակարգելու ՀՀ-ում վերադարձածներին վերաինտեգրման ծառայություն մատուցող գերատեսչությունների և կազմակերպությունների գործունեությունը: Միաժամանակ, ապահովել նրանց սերտ համագործակցությունը:

Տեսանելի է, որ արտերկրներում արտաքսման վտանգի առջև կանգնած հայ միգրանտները հայտնվում են ծանր վիճակում: Նրանցից խելամիտները գերադասում են վերադառնալ հայրենիք, մյուսները ապաստան որոնելու նպատակով մեկնում են միգրանտների հանդեպ համեմատաբար հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերող մեկ այլ երկիր:

ՀՀ իշխանությունների և ողջ հասարակության գերխնդիրն է այնպիսի պայմանների ստեղծումը և միջավայրի ձևավորումը, որը կնպաստի հայրենիք վերադարձած ՀՀ քաղաքացիների վերաինտեգրմանը: Փորձը ցույց է տալիս, որ առաջնահերթայինը վերադարձածների հայրենիքում սոցիալ-տնտեսական վերաինտեգրումն է: Այն կապահովի հայրենիք վերադարձած միգրանտների և նրանց ընտանիքի անդամների բնականոն կենսակերպը: Սոցիալ-տնտեսական ինտեգրումը հիմք է հանդիսանում վերադարձածների հետ առնչվող կրթամշակութային բարոյահոգեբանական ինտեգրացիոն գործընթացների ակտիվացմանը:

Այդ ամենն իրենց դրսևորումն պետք է գտնեն միգրանտների հետ առնչվող օրենսդրության հիմնարար դրույթների մշակմամբ և գործնականում քննություն բռնած օրենքների խորացմամբ: Այս ուղղությամբ դրական փորձ է կուտակվել ՀՀ-ում:

Միգրացիոն իրավունքի էությունն արտահայտվում է օրենսդրորեն ձևակերպված (ամրագրված) միգրացիոն իրավակարգում, որը՝

ա) միգրացիան դիտարկում է պետության կողմից կարգավորվող հասարակական հարաբերություն՝ բացահայտելով այդ ֆենոմենի նորմատիվ-իրավական բովանդակությունը,

բ) սահմանելով դրա իրավական կարգավորման առարկան,

գ) բացահայտելով իրավական կարգավորման սուբյեկտը՝ որպես մարմինների համակցություն, որոնք պատասխանատու են միգրացիոն գործընթացների պլանավորման (ծրագրման) և կարգավորման համար :

ՀՀ-ում միգրացիայի պետական կարգավորման 2012-2016թթ. քաղաքականության հայեցակարգի իրականացման շրջանակներում գործուն քայլեր են կատարվել հայրենիք վերադարձած անձանց զբաղվածության ծրագրերի իրականացման ասպարեզում: Դրա շնորհիվ մի քանի տասնյակ Հայաստան վերադարձած անձինք աշխատանք են

գտել երկրի տնտեսության տարբեր ոլորտներում: Այս խնդրում գործուն աջակցություն և վերադարձաձեռնարկն նյութական օժանդակություն է ցուցաբերել նաև ՄՄԿ-ի Երևանյան գրասենյակը: Դրական է այն, որ Հայաստանի կառավարությունը բանակցություններ է վարում հայ միգրանտներին ընդունած եվրոպական և մի շարք այլ պետությունների հետ՝ նրանց նյութական օժանդակությունը հայցելով իրենց երկրներից հարկադրաբար ՀՀ վերադարձած միգրանտների նյութական վիճակի բարելավման նպատակով: Այդ բանակցությունները դրական արդյունք տվեցին: Նիդերլանդներից, Բելգիայից, Շվեդիայից և մի շարք այլ երկրներից Հայաստան վերադարձածները դրամական օժանդակություն ստացան վերը նշված պետություններից:

Հայրենիք վերադարձածների վերաինտեգրման գործընթացը, փաստորեն, սկսվում է Հայաստանում խորհրդատվական բնույթի ծառայությունների կազմակերպմամբ: Այն նկատի ունի ինչպես միգրացիոն ոլորտի կանոնակարգող մարմինների աշխատակիցների հետ վերադարձածների անմիջական հանդիպումների կազմակերպումը, այնպես էլ համացանցային տեղեկատվական համակարգի կատարելագործումը:

ՀՀ-ում առաջնահերթային է միգրանտների և վերադարձածների հիմնախնդիրները համակարգող միասնական կենտրոնի ստեղծումը: ՀՀ-ում, փաստորեն, բացակայում է միգրացիայի կանոնակարգման միասնական համակարգ: Տրամաբանական կլիներ, որ պոտենցիալ և վերադարձած միգրանտները խորհրդատվություն և աջակցություն ստանային մեկ միասնական կենտրոնից: Մինչդեռ նրանց խնդիրներով զբաղվում են 7 միգրացիոն ռեսուրս կենտրոնները (ՄՌԿ), որոնք գործում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալության (ԶՊԳ) ներքո:

Վերադարձած անձանց վերաբերող հիմնախնդիրները կարգավորվում են ոչ թե մեկ կենտրոնի, այլ մի շարք նախարարությունների և կազմակերպությունների կողմից: Անկասկած, հայրենիք վերադարձածների խնդիրների կանոնակարգման մեկ միասնական կենտրոնի ստեղծման անհրաժեշտությունը վերաբերում է ոչ թե արտասահմանյան բարեգործական ընկերությունների, այլ ՀՀ իշխանական մարմինների գործունեությանը:

Ներկայումս, Հայաստանում գործում են մի շարք կազմակերպություններ, որոնք իրականացնում են հայրենիք վերադարձածների վերաինտեգրման ծրագրեր: Այդ կազմակերպություններն են «Հայկական կարիտասը», «Առաքելություն Հայաստան», «Հայ-ֆրանսիական զարգացման հիմնադրամը», «Միգրացիայի միջազգային կազմա-

կերպությունը», «Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակը»¹²:

1995 թվականից ՀՀ-ում իր գործունեությունն է ծավալում հայկական բարեգործական «Հայկական կարիտաս» հասարակական կազմակերպությունը: Նրա գործունեության առանցքային ուղղություններն են մարդկանց սոցիալական պաշտպանությունը, առողջապահությունը, համայնքային զարգացումը: «Հայկական կարիտասը» զգալի աջակցություն է ցուցաբերում Հայաստան վերադարձածների վերաինտեգրմանը: Այն հատկապես դրսևորվում է վերադարձածներին նյութական օգնություն ցուցաբերելով: Վերը նշված կազմակերպությունը նյութական օժանդակություն է ցուցաբերում ՀՀ-ի բնակչության խոցելի խմբերին՝ որք և հիվանդ երեխաներին, տարեցներին, հաշմանդամներին և այլն:

«Հայկական կարիտաս»-ի աջակցությամբ ՀՀ-ում կառուցվում են համայնքային կենտրոններ, բարելավվում մարզերում ջրամատակարարման համակարգի գործունեությունը:

2006 թվականից «Հայկական կարիտաս»-ը համագործակցում է «Կարիտաս Բելգիա» կազմակերպություն հետ: Այդ համագործակցությունը թելադրված է նրանով, որ Բելգիայում բնակվում են զգալի քանակով հայ միգրանտներ:

Հայաստան վերադարձած անձանց և բնակչության խոցելի խմբերի հետ բարեգործական աշխատանքներ է ծավալել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը (ԲՀԿ):

Գնահատելի է հայ միգրանտների և հայրենիք վերադարձածների կենսակերպը կանոնակարգելու ասպարեզում Հայ-ֆրանսիական համագործակցությունը: Այն իրականացվում է երկու կազմակերպությունների «Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակ»-ի և «Հայ-ֆրանսիական զարգացման հիմնադրամ»-ի օժանդակությամբ:

«Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակ»-ը հիմնադրվել է 2005 թվականին որպես Ֆրանսիայի հանրապետության ներքին գործերի նախարարության ենթակայության ներքո գործող պետական մարմին: Այն պատասխանատու է միգրացիայի քաղաքականության իրականացման համար: Հայաստանում ներգաղթի և ինտեգրման գրասենյակի ներկայացուցչությունը ստեղծվել է 2012 թվականի դեկտեմբերին և պատասխանատու է հայկական ծագում ունեցող Հայաստան վերադարձած անձանց վերաինտեգրման ծրագրերն իրականացնելու համար¹³:

Ֆրանսիայից Հայաստան վերադարձողների վերաինտեգրման նպատակով վերը նշված երկու կազմակերպությունները աջակցություն են ցուցա-

բերում փոքր բիզնեսի ասպարեզում աշխատանքային պայմանների ստեղծմամբ, ինչպես նաև նրանց մասնագիտական վերապատրաստման հարցում:

Գովելի է, որ ֆրանսիական գրասենյակն աջակցում է ոչ միայն Ֆրանսիայից, այլև այլ երկրներից Հայաստան վերադարձած անձանց:

2004 թվականին ստեղծված Հայ-ֆրանսիական զարգացման հիմնադրամը իր գործառույթները ծավալում է Ֆրանսիայի հայկական համայնքի դրամական միջոցներով: Ըստ էության, հիմնադրամն իր առջև նույնպիսի խնդիրներ է դնում ինչ վերը նշված Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակը: Այն է՝ աջակցել հայրենիք վերադարձածների վերաինտեգրմանը ՀՀ-ում:

Հայաստանում պոտենցիալ միգրանտների և հայրենիք վերադարձածների շրջանում ծավալուն աշխատանք է կատարում Միգրացիայի միջազգային կազմակերպությունը: 1993 թվականից սկսած ՄՄԿ-ն կարևոր դերակատարություն ունի ՀՀ-ում միգրացիայի կառավարման սկզբունքների մշակման և արդիականացման ասպարեզում: Միգրացիայի կառավարման ոլորտի բարեփոխումների ՄՄԿ-ի գործունեությունը տարվում է հետևյալ ուղղություններով. խորհրդատվություն ՀՀ-ում՝ միգրացիոն քաղաքականության արդի պահանջներին համապատասխանեցման համար, տեխնիկական աջակցության ցուցաբերում միգրացիայի հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպություններին, դասընթացների կազմակերպում միգրացիոն ոլորտի կառավարման մասնագետների համար, նյութական օժանդակության ցուցաբերում հայրենիք վերադարձած քաղաքացիներին և այլն: Միաժամանակ, ՄՄԿ-ն սոցիոլոգիական բնույթի ուսումնասիրություններ է իրականացնում ՀՀ-ի պոտենցիալ միգրանտների և հայրենիք վերադարձածների շրջանում: Հետազոտության արդյունքները մասնագիտական մեկնաբանություններով, առանձին գրքույկներով տպագրվում են: Դրանով իսկ բարձրացվում է միգրացիայի վերաբերյալ հանրության իրազեկությունը:

ՄՄԿ-ի Հայաստանի առաքելությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքո հիմնել է միգրացիոն ռեսուրս կենտրոն:

ՄՄԿ-ի Հայաստանի առաքելությունը 2000-2015 թվականներին նյութապես աջակցել է հիմնականում եվրոպական երկրներից Հայաստան վերադարձած 6726 միգրանտների: Նրանց աջակցություն է ցուցաբերվել անհատական սկզբունքով¹⁴:

Միգրանտների, այդ թվում նաև Հայաստան վերադարձածների համար առաջնային նշանակություն ունի իրավաբանական բնույթի մատչելի ծառայության կազմակերպումը և հարկ եղած դեպքում

անվճար օժանդակությունը: Հայրենիք վերադարձածների համար նույնքան կարևոր է անձնական տվյալների պաշտպանությունը:

Անկասկած իրավաբանական օժանդակությունը ցուցաբերվում է հասարակության տարբեր խմբերին և առանձին անձանց ոչ համաչափ՝ ելնելով նրանց նյութական հնարավորություններից և ֆիզիկական ու առողջական վիճակից: Այսպես, առանձին դեպքերում փախստականներին, ՀՀ-ում ժամանակավոր ապաստան ստացածներին, գործազուրկներին, միայնակ բնակվող կենսաթոշակառուներին, ինչպես նաև անվճարունակ ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակության վերաբերյալ հավաստի տվյալներ են ներկայացնում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսվում է իրավաբանական անվճար օգնության տրամադրում: Տվյալ պարագայում միայն նախապայմանը հանդիսանում է այն, որ հաստատվում է վերը նշված անձանց իրավաբան վարձելու անվճարունակությունը:

Նկատելի է, որ Հայաստան վերադարձածների մեծ մասը հայտնվում է այն մարդկանց շրջանում, ովքեր անվճար իրավաբանական օգնության կարիք ունեն:

Համանման իրավիճակում են գտնվում նաև ՀՀ-ի պոտենցիալ միգրանտների մեծ մասը, ինչպես նաև Հայաստանի տարածքում գտնվող տարբեր ազգի միգրանտները:

Համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի վերընշված և ՀՀ-ի բնակչության մի քանի այլ կատեգորիաներին, ինչպես Հայրենական Մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցներին, առաջին և երկրորդ խմբի հաշմանդամներին նույնպես տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն: Այն իրականացվում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից՝ հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով:

Փաստաբանների կողմից անձանց անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է պետական բյուջեի հաշվին:

Թերևս կարիք կա նշել, որ ՀՀ-ում հանրային պաշտպանի գրասենյակը ունի 27 լրիվ և 2 ոչ լրիվ աշխատատեղերով հանրային պաշտպան Երևանում և 38 հանրային պաշտպան Հայաստանի մարզերում¹⁵:

Մարդու, այդ թվում ՀՀ վերադարձածների, իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը երաշխավորված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ամրագրված ՀՀ-ի կնքած միջազգային պայմանագրերում: Նրանց հիմքում միջազգային իրավունքի սկզ-

բունքներն են և օրենսդրական նորմերը:

ՀՀ-ում մարդու իրավունքների խախտման ամեն դրսևորման նկատմամբ անձն իր բողոքը կարող է ներկայացնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ: Հատկանշական է վերը նշված գրասենյակի ընդգրկում կազմը՝ այն է՝ կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների, փախստականների, զինծառայողների, ազգային փոքրամասնությունների և այլոց խնդիրներով զբաղվող բաժիններ:

Նկատելի է, որ արտերկրներից հայրենիք վերադարձող անձինք հաճախ են դիմում մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ: Որպես կանոն, նրանց ամենից շատ հետաքրքրում է խորհրդատվությունը, հայրենիք վերադառնալուց հետո իրենց վերապահվող իրավունքների պարզաբանումը:

Հայրենիք վերադարձողների համար առաջնահերթ է նաև անձնական տվյալների պաշտպանությունը, քանի որ արտերկրներում նրանք հաճախ հայտնվում են ոչ միանշանակ հասարակական միջավայրում: Հատկապես խոցելի իրավիճակից վերադարձողների, ինչպես օրինակ արտերկրում նվաստացուցիչ աշխատանք կատարողների, թրաֆիքինգի զոհերի հայրենիք վերադարձից հետո սոցիալական բնականոն վերաինտեգրումը պայմանավորված է նաև նրանց անձնական կյանքի զաղտնիության և անձնական տվյալների պաշտպանության իրավունքի նկատմամբ նոր միջավայրում հարգալից վերաբերմունքից:

Անձնական տվյալների գաղտնիության և պաշտպանության անհրաժեշտությունը, անկախ անձի հասարակության մեջ ունեցած դերից, բխում է մարդու իրավունքի պաշտպանության սկզբունքից: Այդ գիտակցությամբ է թելադրված, որ 2015 թվականի մայիսի 18-ին ընդունվեց «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը:

Այդ օրենքի գործնականում իրականացման նպատակով ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ին N 734 որոշմամբ ստեղծվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը և հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի անձնական տվյալների պաշտպանության գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը:

Հայաստան վերադարձած անձինք հայրենիքում հաճախ հայտնվում են ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև միջանձնական, բարոյահոգեբանական նոր իրավիճակում: Վերադարձողը գիտակցում է, որ փոփոխվել են երկրի սոցիալ-տնտեսական պայմանները, իսկ նոր Սահմանադրության ընդունմամբ նաև պետական կառավարման համա-

կարգը: Միաժամանակ, թուլացել են վերադարձածների և տեղաբնակների մտերիմների անձնական կապերը, ուստի վերադարձածները հայրենի հողը ուր դնելու առաջին իսկ պահից կարիք ունեն մարդկային հոգատարության և իրենց նկատմամբ ուշադրության, ինչպես իշխանական մարմինների ներկայացուցիչների, այնպես էլ ողջ հասարակության կողմից:

Առաջնահերթային է հայրենիք վերադարձածներին համակողմանի խորհրդատվության կազմակերպումը ՀՀ իշխանությունների և միջազգային կազմակերպությունների կողմից: Հատկապես կարևոր է վերադարձածներին տեղեկացնել ՀՀ-ում առկա վերաինտեգրման ծրագրերի մասին: Նույնքան կարևոր է վերադարձած անձանց հմտությունների և գործնական կարողությունների ճշմարտացի գնահատումը և գործատուների հետ կապերի հաստատումը:

ՀՀ-ում միգրացիայի ոլորտի կանոնակարգման պետական մարմինները միջազգային կազմակերպությունների հետ համագործակցված համատեղ զգալի աշխատանք են կատարում արտերկրներից հայրենիք վերադարձածների վերաինտեգրման ուղղությամբ:

Հրատապ է ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործումը այն նպատակով, որ հայրենիք վերադարձածների վերաինտեգրման գործընթացը կառավարվի մեկ միասնական կենտրոնից:

Հայաստանի Հանրապետությունում միգրանտների վերաինտեգրումը (ադապտացիան նոր պայմաններին) պետք է իրագործվի հայ ազգային ինքնության գերակայության հենքի վրա, դա Հայաստանի Սահմանադրությունից և ազգային անվտանգության ռազմավարությունից բխող նպատակ է, միևնույն ժամանակ՝ պետության և հասարակության կողմից միգրանտների բազմամշակութային ինքնությունը հարգելով և պաշտպանելով: Հակառակ պարագայում՝ Հայաստանի նման մոնոտարր պետության համար միկրոկուլտուրալիզմի դրսևորումներն ազգային անվտանգության խնդիր կդառնան՝ բազմամշակութային տարրեր կրող միգրանտները մշակութային բևեռացման կտանեն իրենց ոչ ադապտացված լինելու պատճառով:

¹ Տե՛ս, Աղասի Թաղևոսյան «Միգրացիա և առօրեականություն», Երևան, 2014, էջ 5:

² Cerase F.P. 1974. Expectations and Reality. A Study of Return Migration from United States of Southern Italy. International Migration Review. 8(2). Pp.245-262.

³ Мукомель В. И. Адаптация и интеграция мигрантов: методологические подходы к оценке результативности и роль принимающего общества // Россия реформирующаяся: Ежегодник (сборник научных статей) / отв. ред. М. К. Горшков; Институт социологии РАН. -Москва: Новый хронограф, 2016. - Вып. 14 - С. 411-467. http://www.isras.ru/files/File/ezhegodnik/2016/Ezhegodnik_2016_Mukomel.pdf

⁴ С. С. Владимирова, К. А. Пшенко, Т. Г. Шарри «Проблемы социокультурной, языковой и правовой адаптации трудовых мигрантов в РФ», жур. «Человек и образование» N 4, ст. 50 /снос. 4/ <http://elibrary.ru/item.asp?id=15566707>

⁵ Технологии психологического сопровождения интеграции мигрантов в образовательной среде: Учебно-методическое пособие для педагогов-психологов. (Электронный ресурс) / под ред. О. Е. Хухлаев, М. Ю. Чибисова. М.: МГППУ. 2013. - 57 с. http://www.isras.ru/files/File/publ/Kuznetsov_Tehnologii_psikhologicheskogo_soprovozhdeniya.pdf

⁶ Հարցազրույց ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր Ա. Ենգոյանի հետ: <http://www.hayzinvor.am/12297.html>

⁷ «Ստվերային լեզվաքաղաքականություն» Հայրենի բարձրագույն խորհուրդ: <http://www.lragir.am/index/arm/0/society/view/36364>

⁸ Մուլտիկուլտուրալիզմ-գարգացման բազմաթիվ գործընթացների համալիր է, որի արդյունքում ի հայտ են գալիս բազմաթիվ մշակույթներ, որոնք հակակշիռ են հանդիսանում ազգային միասնական մշակույթին, ինչն էլ իր հերթին վտանգի տակ է դնում ազգային ինքնության գոյությունը: (. В. Акопян, «Мультикультурализм: основные теоретические подходы» <http://www.idmedina.ru/books/materials/rmforum/4/akopyan.htm>)

⁹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետությունում անկանոն միգրացիայի վերաբերյալ ելակետային հետազոտություն, Երևան 2016, էջ 20:

¹⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության ռազմավարություն 2017-2021, Երևան 2016, էջ 19-20:

¹¹ Брик А.Д. «Ограничения в миграционном праве в контексте теоретико- правовой интерпретации его сущности» /ЮРИСТЪ - ПРАВОВЕДЪ 2008(6)/ <http://elibrary.ru/item.asp?id=15115179>.

¹² Տե՛ս, Հայաստան վերադարձած անձանց վերաինտեգրման ուղղորդման ուղեցույց, Երևան 2016, էջ 20-21:

¹³ Տե՛ս, Հայաստան վերադարձած անձանց վերաինտեգրման ուղղորդման ուղեցույց, Երևան 2016, էջ 21:

¹⁴ Տե՛ս, Հայաստան վերադարձած անձանց վերաինտեգրման ուղղորդման ուղեցույց, Երևան 2016, էջ 23:

¹⁵ Տե՛ս, Հայաստան վերադարձած անձանց վերաինտեգրման ուղղորդման ուղեցույց, Երևան 2016, էջ 44-45:

Ափոտ Այրապետյան

Кандидат юридических наук, доцент
Докторант академии государственного управления РА

РЕЗЮМЕ

Вопросы реинтеграции лиц вернувшихся в Армению

В статье рассматриваются комплексные вопросы и проблемы, связанные с реинтеграцией мигрантов в Республике Армения. В частности, в рамках статьи рассматриваются вопросы уточнения и определения термина реинтеграция мигрантов, а также комплексные вопросы культурной реинтеграции мигрантов.

Ключевые слова: интеграция мигрантов, реинтеграция мигрантов, адаптация мигрантов, культурный шок, мультикультурализм, идеология, языковая политика.

Ashot Hayrapetyan

PhD in law, Associate professor
Doctoral in the Public Administration
Academy of the Republic of Armenia

SUMMARY

Reintegration Problems of Persons Returned to Armenia

The article examines the complex issues and problems regarding the reintegration of migrants in the Republic of Armenia. Specifically, the article discusses the clarification and definition of the term “reintegration of migrants”, as well as a complex cultural issue of reintegration of migrants.

Keywords: integration of migrants, reintegration of migrants, migrant adaptation, cultural shock, multiculturalism, ideology, Language policy.